Արձանագրություն N 2
Երևան քաղաքում ոռոգման ցանցերի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման ԵՔ-ԳՀԾՁԲ-18/70 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի բացման նիստի

ք. Երևան

23.03.2018թ.
Ժամը՝ 15:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Տ. Իգիթյան/ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Կիրակոսյան /գնահատող/, Ե. Կարապետյան /գնահատող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Հարությունյան /բացող/, Կ. Հարությունյան /բացող/
Ա. Համբարձումյան

1. Տեղեկություններ «ԵՔ-ԳՀԾՁԲ-18/70» ծածկագրով գնման ընթացակարգին հայտերի բացման մասին

(Է. Շաքարյան)

Ընդունել ի գիտություն, որ գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2018 թվականի մարտի 23-ին, ժամը 15:00-ին, Երևանի քաղաքապետարան, ք. Երևան Արգիշտի 1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

2. «ԵՔ-ԳՀԾՁԲ-18/70» ծածկագրով գնման ընթացակարգին հայտեր ներկայացրած մասնակիցների մասին

(Է. Շաքարյան)

Գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

հ/հ	Մասնակիցների անվանումը
1	« ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ
2	«ՆՅՈՒ ԻՆԴԱՍԹՐԻԶ » ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3.Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների մասին

(Է. Շաքարյան)

3.1 Գնանշման հարցման ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացվել են հետևյալ գնային առաջարկները.

1. Երևան քաղաքի Մոսկովյան և Նալբանդյան (Մոսկովյան-Իսահակյան փողոցների միջանկյալ հատված) փողոցում ոռոգման ցանցերի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություններն				
Մասնակցի անվանումը	Նախահաշվային գինը	Առաջարկած գինը		
		Արժեքը	ԱԱՀ	Ընդհանուր
«ՆՅՈՒ ԻՆԴԱՍԹՐԻԶ » ՍՊԸ	225000	50000		50000
« ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ		64000	12800	76800

2. Երևան քաղաքի Հրազդանի կիրճ-Արաբկիր զբոսայգու (պոմպակայան) ոռոգման ցանցերի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություններ		
Մասնակցի անվանումը	Նախահաշվային գինը	Առաջարկած գինը

		Արժեքը	ԱԱՀ	Ընդհանուր
« ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ	642000	94000	18800	112800
«ՆՅՈՒ ԻՆԴԱՍԹՐԻԶ » ՍՊԸ		180000		180000

3. Երևան քաղաքի Շիրակի փողոցի ոռոգման ցանցերի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություններ

Մասնակցի անվանումը	Նախահաշվային գինը	Առաջարկած գինը		
		Արժեքը	ԱԱՀ	Ընդհանուր
« ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ	95000	34000	6800	40800
«ՆՅՈՒ ԻՆԴԱՍԹՐԻԶ » ՍՊԸ		80000		80000

4. Երևան քաղաքի Մանանդյան փողոցի (Գ. Նժդեհի փողոցներից մինչև «Հայէլեկտրոն գործարան») ոռոգման ցանցերի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություններ

Մասնակցի անվանումը	Նախահաշվային գինը	Առաջարկած գինը		
		Արժեքը	ԱԱՀ	Ընդհանուր
« ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ	160000	43000	8600	51600
«ՆՅՈՒ ԻՆԴԱՍԹՐԻԶ » ՍՊԸ		80000		80000

3.2 Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկներում չկան թվաբանական անճշտություններ:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4.Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին

(Է. Շաքարյան)

4.1 Մասնակիցների կողմից ներկայացված էլեկտրոնային փաթեթներում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և դրանք համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

4.2 Գնահատող հանձնաժողովի կողմից մասնակիցների հայտերը էլեկտրոնային համակարգի միջոցով գնահատվել են հետևյալ կերպ.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
« ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ	Բավարար
«ՆՅՈՒ ԻՆԴԱՍԹՐԻԶ » ՍՊԸ	Բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

5. Ընթացակարգի 1-ին տեղեր զբաղեցնող մասնակիցների մասին

(Է. Շաքարյան)

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ «ԵՔ-ԳՀԾՁԲ-18/70» ծածկագրով գնման ընթացակարգի.

-1-ին, չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «ՆՅՈՒ ԻՆԴԱՍԹՐԻԶ» ՍՊԸ-ն, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից, 2-րդ տեղ՝ «ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ –ն,

-2-րդ, 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ-ն, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից, 2-րդ տեղ՝ «ՆՅՈՒ ԻՆԴԱՍԹՐԻԶ» ՍՊԸ –ն,

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

6. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու մասին

(Է. Շաքարյան)

Հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ 26.03.2018թ. հարցում ներկայացնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

7. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Է. Շաքարյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել սույն արձանագրության 6-րդ կետում նշված հարցման ստացման հաջորդ աշխատանքային օրը, ժամը 11:20-ին, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 3-րդ հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ..... Է. Շաքարյան

Անդամներ՝ ..... Վ. Չիլինգարյան

..... Ա. Մաքսապետյան

..... Լ. Գևորգյան

..... Ա. Հազարապետյան

Քարտուղար՝ ..... Ա. Համբարձումյան